

libraries.am

անկախ
գրադարանների
ցանց

ԿՈՅԱ ՔԱՐՏԱԳՐՄԱՆ
USMARC ԴԱՇՏԵՐԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ



Սույն ուղեցույցի ստեղծումը

Նախաձեռնել է «Անկախ գրադարանների ցանց»-ը (libraires.am) եւ Ֆոկուս արվեստի ՀԿ-ն ՀՀ ԿԳՍՄ Նախարարության մշակութային ծրագրերի դրամաշնորհի մրցույթի շրջանակներում («Թանգարանային և գրադարանային ոլորտների ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» անվանակարգ):

Նախատեսված է «Անկախ գրադարանների ցանց» (libraires.am)-ի գրադարանավարների, ինչպես նաեւ սեփական քարտարան ստեղծած կազմակերպությունների գրադարանավարների, ուսանողների եւ գրադարանավարական գործ ուսումնասիրողների համար:



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՏԱԽՈՒՅՈՒՆ ԵՎ ՄՐԵՐԻՑԻ ՆԱԽԱՐԱՐԱՆՈՒՄ

libraires.am
անկախ
գրադարանների
ցանց

ԿՈՅԱ ԶԱՐՏԱԳՐՄԱՆ USMARC ԴԱՇՏԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կազմող՝ Կարին Գրիգորյան
Խորհրդատու՝ Աիդա Սարգսյան
Ձեռավորող՝ Նորա Գալֆայան

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

Երկու խոսք	7
Ինչպես օգտվել ուղեցույցից	9
Ինչպես կատարել գրառում	14
USMARK դաշտեր	19
Ամբողջական օրինակներ	89

Երկու խոսք

ԿՈՅԱ-ն գրադարանային բոլոր գործընթացների բաց կողով ծրագրային ապահովում է, որից օգտվում են աշխարհի խոշորագույն գրադարանները, այդ թվում եւ Հայաստանի ազգային գրադարանը: ԿՈՅԱ ծրագրային ապահովումը կարող է օգտագործել ինչպես առանձին անկախ գրադարանը, այնպես էլ գրադարանների միավորված խումբը, որ նախընտրել է ստեղծել միասնական քարտարան: Ծրագրի շնորհիվ միավորված գրադարանների ընթերցողները կարող են փնտրել եւ գտնել իրենց նախընտրած նյութը միմյանց շտեմարաններից, պատվիրել առցանց, կատարել տացք, վերադարձ եւ այլն: Հայաստանում ԿՈՅԱ համակարգը ներդրված է վաղուց, եւ խոշոր գրադարանները հաջողությամբ օգտվում են դրանից: Ցանկացած մեծ եւ փոքր, մարզային, համայնքային թե անձնական գրադարան ինչպես նաեւ թանգարան եւ արխիվ կարող է օգտվել այս անվճար ծրագրային ապահովումից՝ մշակված միջազգային բարձր չափանիշների համաձայն:

Սույն ուղեցույցը, որը ստեղծվել է «Անկախ գրադարանների ցանցի» (libraries.am) նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՍՄ նախարարության աջակցությամբ, փորձ է առաջին անգամ հայերենով ներկայացնելու ԿՈՅԱ քարտագրման USMARC* հիմնական դաշտերի թարգմանությունն ու նկարագրությունը, ինչպես նաեւ այն քայլերը, որոնց հետեւելով սկսնակ գրադարանավարները, ուսանողները, անգամ մշակութային կազմակերպության համակարգողները կարող են գրառումներ կատարել ծրագրի համապատասխան դաշտերում եւ քարտագրել գիրքը, ամսագիրը, CD-ն կամ ցանկացած այլ գրադարանային միավոր՝ ստեղծելով կազմակերպության էլեկտրոնային շտեմարանը: Ուղեցույցում տրված են գիրք, գրքույկ, ամսագիր, քարտեզ, էլեկտրոնային նյութ եւ արվեստի գործ քարտագրելու համար անհրաժեշտ MARC դաշտերի նկարագրությունը՝ օրինակներով:

Ինչպես նշեցինք, ուղեցույցը ԿՈՅԱ համակարգի USMARC դաշտերի թարգմանության եւ հանրայնացման առաջին փորձն է եւ կատարելագործման երկար ճանապարհ ունի: Տարիներ առաջ Նինա Բժշկյանը ստեղծել էր նմանատիպ ձեռնարկ ռուսերենով, որը մեզ է հասել տիկին Աիդա Սարգսյանի շնորհիվ, ում եւ անսահման երախտապարտ ենք ուղեցույցի ստեղծման աշխատանքների աջակցելու համար: Ուղեցույցի դաշտերի թարգմանությունը կատարվել է ըստ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի «MARC 21 Format for Bibliographic Data» ուղեցույցի, (թողարկված՝ 1999 թ., վերջին թարմացումը՝ նոյեմբեր, 2019 թ.):

Այս ուղեցույցը ստեղծվել է հանրային լայն կիրառման նպատակով, այդուհանդերձ դրա ստեղծման առաջնային նպատակը «Անկախ գրադարանների ցանցի» (libraries.am) ներքին ռեսուրսին ծառայելն է, քանի որ ցանցում ներգրավված են ոչ անապամանորեն գրադարանային գործառույթ ունեցող կազմակերպություններ, եւ դրանցից շատերը չունեն մշտական գրադարանավարներ կամ այլ համապատասխան մասնագետներ:

Երախտապարտ կլինենք ստանալու ձեր առաջարկներն ու դիտողությունները karin.grgioryan@gmail.com հասցեին:

Կարին Գրիգորյան

* Հայաստանի գրադարաններն ընտրել են մուտքագրման USMARC թվային ձեւաչափը:

Քարտագրման USMARC գրառումը բաղկացած է երեք տարրից.

- * Գրառման կառուցվածք, որն իրականացվում է ANSI (American National Standard for Information Interchange) տեղեկատվության փոխանակման ամերիկյան ազգային ստանդարտին համապատասխան
- * Գրառման տվյալներ՝ կողեր (դաշտեր, ենթադաշտեր, ցուցիչներ), որոնք հատուկ ստեղծված են նյութի տվյալները նկարագրելու համար
- * Բովանդակություն, որն իրականացվում է ISBD (International Standard Bibliographic Description) միջազգային ստանդարտ մատենագիտական նկարագրության կանոններով:

Ինչպես օգտվել ուղեցույցից

Ուղեցույցում նկարագրված են ԿՌՀԱ քարտագրման USMARC դաշտերը, դրանց ցուցիչները եւ ենթադաշտերը, տրված են կամայական օրինակներ, հնարավորության դեպքում երեք լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

Ուղեցույցում մենք օգտագործել ենք պատկերներ libraries.am կայքից, որոնք անգլերեն են: Նախընտրել ենք այդպես, քանի որ ծրագրի հայերեն թարգմանությունը կատարյալ չէ:

Libraries.am եւ ԿՌՀԱ քարտագրման USMARC դաշտեր

Libraries.am-ի միավորված քարտարանի համար մենք ստեղծել ենք 5 մատենագիտական գրառման կմախք՝

«**Books, Booklets, Workbooks (libraries.am)**» (BKS) -

գրքեր, գրքույկներ, ժողովածուներ

«**Serials (libraries.am)**» (SER)- պարբերականներ

«**Maps (libraries.am)**» (MP) - քարտեզներ

«**CD-ROMs, DVD-ROMs, General Online Resources (libraries.am)**»

(CF) - տեսաձայնային կյուրթեր, էլեկտրոնային ռեսուրսներ

«**Art materials (libraries.am)**» (ART) - արվեստի գործեր, այլ կյուրթեր:

Այս կմախքներում համապատասխանաբար կարելի է քարտագրել գիրք, գրքույկ, պարբերականներ, քարտեզ, համակարգչային կյուրթ (հողված, թեզ, էլ. գիրք) եւ արվեստի գործ, ներառյալ՝ տեսաձայնային կյուրթեր, CD եւ DVD:

Յուրաքանչյուր դաշտի վերելում գտնենք այս հապավումները՝ **BKS, SER, MP, CF, ART**, որոնք կհուշեն, թե տվյալ դաշտը ինչ միավորի քարտագրման համար է նախատեսված:

Ի սկզբանե ճիշտ ընտրենք գրառման կմախքը, սա շատ կարևոր է:

ԿՈՅԱ քարտագրման USMARC դաշտերը իրենց ենթադաշտերով շատ ավելին են, ինչը նշանակում է, որ կարող ենք անվերջ կատարելագործել գրառումը: Libraries.am-ի մատենագիտական կմախքներում եւ ուղեցույցում, որոնցում USMARC դաշտերը նույնական են, մենք պահպանել ենք կարևոր նշանակության բոլոր դաշտերը, ինչը թույլ է տալիս, որ մեր գրառումը համապատասխանի միջազգային չափանիշներին:

Կրկնվող դաշտեր

Կան դաշտեր, որոնք կարելի է կրկնել գրառվող միավորի նկարագրությունն ավելի ամբողջական դարձնելու համար: Կրկնվող են 020, 440, 700, 650 եւ այլ դաշտերը: Պատկերում տրված է «Repeat this tag» նշանը: Դրա կողքին ջնջելու նշանն է՝ «Delete this tag»: Փորձենք չչփոթել [սկ. 1](#)

008 ? - FIXED-LENGTH DATA ELEMENTS--GENERAL INFORMATION

020 ? - INTERNATIONAL STANDARD BOOK NUMBER

Repeat this Tag

Պարտադիր դաշտեր

Կան դաշտեր, որոնք կրկնվող չեն, բայց պարտադիր (չլրացնելու դեպքում համակարգը թույլ չի տա պահպանել գրառումը): Պարտադիր են 245, 300, 942 եւ այլ դաշտերը: 300 դաշտը պարտադիր է եւ կրկնվող, եւ այլն:

Ենթադաշտեր եւ ցուցիչներ

Դաշտերն ունեն ցուցիչներ եւ ենթադաշտեր:

Սովորաբար դաշտի համարի աջ կողմում կտեսնեք երկու պատուհանիկ, որոնք ցուցիչների գրանցման համար են: Ցուցիչները կողեր են, որոնք նշում են գրանցվող գրքի տարբեր կարգավիճակները: [Նկ. 2](#)



020 ? - INTERNATIONAL STANDARD BOOK NUMBER  

022 ? - INTERNATIONAL STANDARD SERIAL NUMBER  



Սեղմելով դաշտի թվի ներքեւում երեւացող փոքրիկ սլաքները՝ կնշենք դրանց ճիշտ դիրքը քարտի նկարագրության մեջ: Եկեք առայժմ դրանց ձեռք չտանք: [Նկ. 3](#)

Add MARC record

Section 1

100 ? - MAIN ENTRY--PERSONAL NAME  

▲ 9	9 (RLIN)	<input type="text"/>
▶ ▲ a	Personal name	<input type="text"/>
▶ ▲ b	Numeration	<input type="text"/>
▶ ▲ c	Titles and words associated with a name	<input type="text"/>
▲ d	Dates associated with a name	<input type="text"/>
▲ e	Relator term	<input type="text"/>
▲ q	Fuller form of name	<input type="text"/>

110 ? - MAIN ENTRY--CORPORATE NAME  

Եթե դաշտի նկարագրության մեջ կարդանք, որ առաջին կամ երկրորդ ցուցիչը սահմանված չէ, տվյալ պատուհանը թողնելու ենք դատարկ: Եթե երկու ցուցիչն էլ սահմանված չեն, երկու պատուհանն էլ թողնելու ենք դատարկ: Ուղեցույցի օրինակների մեջ դատարկը նշված է # (բացատ) նշանով:

Ուրեմն՝ # = դատարկ:

Բուն գրառումներն անում ենք ենթադաշտերում: Վարի պատկերներում կամայական ընտրված 245 դաշտն է: 00-ն դրա ցուցիչներն են, իսկ \$a, \$b, \$c, \$h-ը՝ ենթադաշտերը: \$a ենթադաշտում գրանցում ենք **վերնագիրը**, այս դեպքում՝ **«XIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունից»**: Ուղեցույցի օրինակների մեջ ենթադաշտը նշված է \$ նշանով:

Ուրեմն՝ \$ = ենթադաշտ

Այստեղ պարզապես տեսնենք, թե ինչպես են լրացվում ենթադաշտերը: 245 դաշտին հետագայում կանդրադառնանք: [Նկ. 4](#), [Նկ. 5](#)

245 ? [] [] - TITLE STATEMENT *

a	Title	<input type="text"/>	Required
b	Remainder of title	<input type="text"/>	
c	Statement of responsibility, etc.	<input type="text"/>	
h	Medium	<input type="text"/>	

Չլրացված

245 ? 0 0 - TITLE STATEMENT *

a	Title	XIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունից	Required
b	Remainder of title	Մեհագրությունների և հոդվածների ժողովածու /	
c	Statement of responsibility, etc.	Գալական ԱՄԲ ՊԱ Փիլիսոփայության և իրավունքի ին-տ.	
h	Medium	տեքստ	

Լրացված

Կրկնվող ենթադաշտեր

Ենթադաշտերը կարելի է կրկնել, օրինակ՝ 260 (Հրատարակչական եւ այլ տվյալներ) դաշտի \$a ենթադաշտը երկու քաղաքի դեպքում կրկնվում է, \$b

Ենթադաշտը կրկնվում է երկու հրատարակչության դեպքում, եւ այլն: [սկ. 6](#)

260 - PUBLICATION, DISTRIBUTION, ETC.

a Place of publication, distribution, etc.

b Name of publisher, distributor, etc.

c Date of publication, distribution, etc.

Օրինակներ

Ուղեցույցում մեր օրինակներն ունեն հետեւյալ մոտավոր տեսքը.

245 00 \$aXIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունից:
 \$h[տեքստ]
 \$bՄենագրությունների եւ հոդվածների ժողովածու /
 \$cՀայկական ՍՍՀ ԳԱ. Փիլիսոփայության եւ իրավունքի
 ին-տ.

Հիշենք, որ օրինակներում չսահմանված ցուցիչները նշվում են **# (բացատ)** նշանով: ԿՈՅԱ համակարգում քարտագրելիս չսահմանված ցուցիչների պատուհանները պարզապես պետք է դատարկ թողնենք:

Դաշտի համարի եւ ցուցիչների միջեւ **հարցական նշանը (?)** մեզ կտանի Կոնգրեսի գրադարանի համապատասխան դաշտ, որտեղ տվյալ դաշտը իր ենթադաշտերով ու ցուցիչներով մանրամասն նկարագրված են իրենց օրինակներով: Եթե ուղեցույցի օրինակներն ու նկարագրությունը բավարար չհամարենք, միշտ էլ կարող ենք օգտվել մայր աղբյուրից: Քարտագրման դաշտերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը կգտնեք այս հղումներով.

<http://www.loc.gov/marc/bibliographic/bd100.html> (անգլերեն)

<http://marc21.rsl.ru/index.php?f=251> (ռուսերեն)


Ինչպես կատարել գրառում

Ցանկանում եք նոր գիրք կամ էլեկտրոնային հոդված քարտագրել: Ծրագիր մուտք գործելուց հետո փնտրեք «Cataloging» բաժինը, որ սկսենք: Մեզ հետաքրքիր ճամփորդություն է սպասվում: [սկ. 7](#)



Ինչպես ներմուծել գրառում

Նոր գրառում ստեղծելուց՝ քարտագրելուց առաջ եկեք համոզվենք, որ գիրքը մեր քարտարանում առկա չէ: Գուցե «Անկախ գրադարանների ցանց»-ի գործընկերն արդեն քարտագրել է այն: Եկեք փնտրենք ցանցի քարտարանում «Cataloging search» մասում հավաքելով որեւէ տվյալ՝ վերնագիր, հեղինակ, խորագիր եւ այլն: [սկ. 8](#)



Եթե գտնում ենք գիրքը, ապա սեղմենք դրա վրա, որպեսզի ստուգենք, թե արդյո՞ք բոլոր տվյալները համընկնում են: Եթե այո, սեղմենք վերևի հատվածում

գտնվող «edit» հղումը եւ ընտրենք «edit items»-ը: [սկ. 9](#)



Նոր բացված պատուհանում լրացնենք տվյալներ, որ վերաբերում են արդեն մեր գրադարանին: [սկ. 10](#)

2 - Source of classification or shelving scheme	<input type="text"/>
3 - Materials specified (bound volume or other part)	<input type="text"/>
4 - Damaged status	<input type="text"/>
5 - Use restrictions	<input type="text"/>
7 - Not for loan	<input type="text"/>
8 - Collection code	<input type="text"/>
a - Permanent location	<input type="text"/>
b - Current location	<input type="text"/>
c - Shelving location	4Պյուլու գրադարան (4plus)
d - Date acquired	Արվեստ Դայաստան հիմնադրամի մեդիակենտրոն (Arm Foundation)
e - Source of acquisition	Ժամանակակից արվեստի ինստիտուտ (Institute of Contemporary Art)
f - Coded location qualifier	Հովհաննիսյան գրադարան (Johannissyan Library)
g - Cost, normal purchase price	Միրզոյան Գրադարան (Mirzoyan Library)
h - Serial Enumeration / chronology	ՖեմԳրադարան
j - Shelving control number	<input type="text"/>
o - Full call number	<input type="text"/>
t - Copy number	<input type="text"/>
u - Uniform Resource Identifier	<input type="text"/>
v - Cost, replacement price	<input type="text"/>

7 - Եթե միավորը գրադարանից դուրս է տրվում՝ չենք լրացնում, իսկ եթե դուրս չի տրվում, ընտրում ենք «Not for loan»

8 - Եթե ունենք առանձին հավաքածու ընտրում ենք «Collection code»

«**a** - Permanent location» եւ

«**b** - Current location» մասերում ինքնաշխատ լրացված է մեր գրադարանը,

«**c** - Shelving location» մասում նշում ենք հավաքածուի գտնվելու տեղը: Եթե այն գրապահոցում է՝ ընտրում ենք գրապահոց:

«**g** - Cost, normal purchase price» մասում կարող ենք ավելացնել միավորի գինը:

«**i** - Inventory number» մասում գրվում է գրքի ինվենտար համարը:

Եթե ունի դասիչ, լրացնում ենք «**o** - Full call number» մասում:

«**p** - Barcode» մասում լրացնում ենք գրքի պիտակը:

«**t** - Copy number» - Կան գրադարաններ, որ նշում են, թե քանի օրինակ ունեն սվյալ գրքից:

«**h** - Serial Enumeration / chronology» մասում նշվում են գրքի հատորը կամ պարբերականի համարները, թվերը, հատորներն ու էջերը:

«**x** - Non-public note»- Երբեմն գրադարանավարին պետք է լինում նշում անել սվյալ միավորի վերաբերյալ, որը չի վերաբերվում ընթերցողին:


«**y** - Koha item type»-ը կախված է միավորի մուտքագրման ժամանակ 942 դաշտի c ենթադաշտում ընտրված կյուրթի տեսակից («Item type», որը պարտադիր լրացվող ենթադաշտ է): Այսինքն, եթե այդ դաշտում նշված է, որ կյուրթը պարբերական է, ապա «**y** - Koha item type»-ը ինքնաշխատ կլրացվի «Continuing Resource»:

«**z** - Public note»-Գրադարանավարն այստեղ նշումներ է անում միավորի վերաբերյալ, որը կարող են տեսնել նաև ընթերցողները:

Սեղմեք **Save** եւ պատրաստ է, գիրքն ավելացավ նաեւ մեր գրադարանում:

Կա փնտրման մեկ այլ, ընդլայն հնարավորություն՝ մատենագիտական տվյալների ներմուծման «New from Z39.50/SRU search» տեխնոլոգիայով:

Հնարավոր է, որ այդ միավորը քարտագրել են Կոնգրեսի (LOC), Օբսիդի կամ Հայաստանի ազգային գրադարանի հետ միավորված գրադարանները: Այդ դեպքում պարզապես կարելի է գտնել այն եւ ներմուծել մեր գրադարան: Գտնենք «**New from Z39.50/SRU search**» որոնման պատուհանը «+New record» պատուհանի աջ կողմում: [Նկ. 11](#)



Սեղմենք դրա վրա, եւ որոնում կարող ենք իրականացնել գրքի ISBN-ով (Գրքի միջազգային չափօրինակային համար), հեղինակով, վերնագրով, անգամ թեմայով: [Նկ. 12](#)

LIBRARY OF CONGRESS	Art and architecture in the service of politics /		1978		0262131374	78001311	Actions
LIBRARY OF CONGRESS	Bathers, bodies, beauty	Nochlin, Linda	2006		0674021169 (alkpaper) 9780674021167 (alkpaper)	7005050369	Actions
NLA	Courbet :	Nochlin, Linda	2007		9780500286760		MARC preview Card preview
NLA	Courbet :	Nochlin, Linda	2007		9780500286760		Import

Եթե որոնումը արդյունքներ է բերում, ապա ցանկում գտնում ենք համապատասխան գիրքը, ստուգում եւս մեկ անգամ (Card preview կամ MARC preview) եւ ներմուծում (Import):

Ներմուծելուց հետո քարտագրման դաշտերն ինքնաշխատ կերպով կլցվեն տվյալներով, եւ գրառումն արդեն կարելի է պահպանել Save/պահպանել պատուհանի սեղմումով:

Պատրաստ է:

Ինչպես սկսել նոր գրառում

Սեղմենք «New record» հղումը:

Ընտրենք

Books, Booklets, Workbooks (libraries.am) (BKS) -

գրքեր, գրքույկներ, ժողովածուներ

Serials (libraries.am) (SER) - պարբերականներ

Maps (libraries.am) (MP) - քարտեզներ

CD-ROMs, DVD-ROMs, General Online Resources (libraries.am) (CF)

- տեսաձայնային նյութեր, էլեկտրոնային ռեսուրսներ

Art materials (libraries.am) (ART) - արվեստի գործեր, այլ նյութեր:

մատենագիտական գրառման կմախքների միջև:

Այս կմախքներում մենք թողել ենք միայն կարելիոր նշանակության դաշտերը (իսկ գրառման դաշտերը ԿՈՅԱ-ում շմտ-շատ են), այնպես որ մեր գրառումը կլինի միջազգային կանոններին համապատասխան: [Նկ. 13](#)

The screenshot shows the Koha library catalog interface. At the top, there is a search bar with the text "Search the catalog and the reservoir:" and a "Submit" button. Below the search bar, there are several tabs: "Cataloging search" (highlighted), "Check out", "Check in", "Renew", and "Search the catalog". The breadcrumb "Home > Cataloging" is visible below the tabs. The main content area shows a dropdown menu for "New record" with the following options:

- + New record ▾
- Q New from Z39.50/SRU ▾
- Default framework
- Acquisition framework
- Art Materials (Libraries.am)
- Articles
- Audio Cassettes, CDs
- Binders
- Books, Booklets, Workbooks (Libraries.am)
- CD-ROMs, DVD-ROMs, General Online Resources (Libraries.am)
- DVDs, VHS
- Fast Add Framework
- Kits
- Maps (Libraries.am)
- N/A
- Rare Books
- Serials (Libraries.am)

Երկու ոսկե կանոն

Առաջին. Դաշտերն ու ենթադաշտերը լրացնենք ճշգրիտ տվյալներով, եթե անգամ բաց ենք թողնելու որոշ ենթադաշտեր: Ճշգրտությունը մեր երաշխիքն է, որ խնդիրներ չստեղծենք գրադարանի աշխատողների (գրադարանավար, համակարգող) եւ մեր ընթերցողների համար: Նաեւ, որքան կատարյալ լինի քարտագրումը, այդքան հեշտ կլինի որոնումը:

Երկրորդ. Քարտագրումը կատարելու ենք հիմք ընդունելով գրքի տիտղոսաթերթը եւ լեզուն, այսինքն՝ հայերեն գիրքը քարտագրելու ենք հայատառ, անգլերենը՝ լատինատառ, եւ այլն:

Սկսում ենք USMARK դաշտեր

Քարտագրման գրոյական դաշտերը պարունակում են կողավորված տեղեկություններ, այդ պատճառով կարող են պարունակել անհասկանալի ձեւակերպումներ: Դրանք նախատեսված են կյոթը ավելի հանգամանալից նկարագրելու համար, տեսանելի չեն ընթերցողներին, եւ ըստ եուղյան, «ամենախուճուճ» դաշտերն են, բայց հեշտ հաղթահարելի, եթե հետեւենք ուղեցույցին:

00X *խումբը պարունակում է վերահսկիչ, կառավարող, կողավորված տեղեկատվություն, որն օգտագործվում է USMARC մատենագիտական գրառումների մշակման գործընթացում, չունի ցուցիչներ կամ ենթադաշտեր: Հիմնականում 00X խումբը պարունակում է կամ տվյալների մեկ տարր, կամ ֆիքսված երկարությամբ դիրքով մի խումբ տարրեր:*

դաշտ

BKS

SER

MP

CF

ART

000 Առաջնորդող**LEADER**

Ֆիքսված երկարությամբ վերահսկիչ դաշտ (Fixed length control field)

Վերահսկիչ ու ֆիքսված 000 դաշտը ապահովում է յուրաքանչյուր գրառման դիրքի առաջին 24 սիշը (00-23) եւ մատենագիտական կողավորված տեղեկությունն է: Համակարգող գրադարանավարն ըստ այս տվյալների ավելի արագ ու հեշտ կիմբավորի, դուրս կբերի կամ կփոփոխի գրառումների տարբեր խմբերը:

Ի՞նչ ենք ուզում գրանցել, գի՞րք, ամսագի՞ր, քարտե՞զ: Այս դաշտում պետք է ընտրենք գրառման մատենագիտական ճիշտ ձեւաչափը (տեսակը): [սկ. 14](#)

control field

Required

«Tag editor»-ը սեղմելիս կբացվի այսպիսի առանձին պատուհան, որտեղից կընտրենք մեր գրառմանը համապատասխանող կողը: [սկ. 15](#)

000 - Leader

0-4 Record size	(auto-filled)
5- Record status	n- New ▼
6- Type of record	a- Language material ▼
7- Bibliographic level	m- Monograph/item ▼
8- Type of control	No specific type ▼
9- Character coding scheme	a - UCS/Unicode (auto-filled)
10-16 indicator/subfields/size	(auto-filled)
17- Encoding level	7- Minimal level ▼
18 - Descriptive cataloging form	a- AACR 2 ▼
19 - Multipart resource record level	Not specified or not applicable ▼
20-24 entry map & lengths	(auto-filled)

OK

Cancel

Օրինակ`

5 Record status / Գրառման կարգավիճակ

Ընտրենք, արդյո՞ք նոր գրառում է, խմբագրված, վերամշակված, թե՞ այլ

6 Type of record / Մատենագրական տեսակ

Ընտրենք համապատասխան կողմը ըստ միավորի մատենագրական տեսակի՝ գիրք, ամսագիր, հավաքածու, CD, նոտաներ, քարտեզ եւ այլն:

7 Bibliographic level / Մատենագրական մակարդակ

Այստեղ ինքնաշխատ կերպով դրված է m-Monograph/item, որը գրքի համար է: Եթե ամսագիր ենք գրանցում, ապա պետք է ընտրենք s-Serial, եթե հավաքածու՝ c-Collection: Եթե մեր միավորը որեւէ այլ գրառված միավորի մաս է կազմում, գրքի հավելված է, եւ այլն, ընտրում ենք d-Subunit:

Սեղմենք OK-ը՝ պահպանելու գրառումը:

Չիշենք, որ եթե ճիշտ ենք ընտրել գրքի մատենագիտական գրառման կմախքը` (Books, booklets (Libraries.am)), եւ եթե գրանցում ենք նոր գիրք, ապա «Tag editor»-ով այս դաշտում ոչինչ փոխել պետք չէ: Սեղմեք դաշտի վրա, եւ դաշտն ինքնաշխատ կլրացվի նմանօրինակ կոդով, որը ճիշտ է գրքի դեպքում:

nam a22 7a 4500

Վերջում, ամբողջական գրառումը պահպանելուց հետո այս կողմ ինքնաշխատ կփոփոխվի դաշտերում մեր լրացրած տվյալների համաձայն: Երբ հետագայում բացենք գրառումը, ենթադրենք, խմբագրելու համար, այն կարող է ունենալ հետեւյալ մոտավոր տեսքը

4500 01977nam a22003137a 4500

դաշտ

MP ART

007 Ընդհանուր տեղեկություն. Ֆիզիկական նկարագրության ֆիքսված երկարությամբ դաշտ

PHYSICAL DESCRIPTION FIXED FIELD-GENERAL INFORMATION

Այս դաշտը կողավորված տեղեկությունն է գրանցվող միավորի ֆիզիկական տվյալների վերաբերյալ: Tag editor-ով [սկ. 16](#) բացելք պատուհանը եւ Material type-ը (գրառվող միավորի տեսակը) նշենք [Map](#) [սկ. 17](#): Այնուհետեւ ընտրենք ըստ համապատասխանության.

Control field *Required*

Tag editor

- 01** Specific material designation (նյութի հատուկ տեսակ)
- 02** Undefined (սահմանված չէ)
- 03** Color (գունավոր է, թե ոչ)
- 04** Physical medium (ֆիզիկական միջոցը, թե ինչ նյութի վրա է պատկերված)
- 05** Type of reproduction (վերատպության տեսակը)
- 06** Production/reproduction details (այլ տպագրական մանրամասներ)
- 07** Positive/negative aspect (դրական/բացասական կողմ)

007 Physical description fixed field--General information

Material type:

00 Category of material	a- Map
01 Specific material designation	d- Atlas
02 Undefined	ՉՖ- Undefined
03 Color	a- One color
04 Physical medium	a- Paper
05 Type of reproduction	f- Facsimile
06 Production/reproduction details	a- Photocopy, blueline print
07 Positive/negative aspect	a- Positive

Դաշտը ցանկալի է լրացնել նաեւ արվեստի գործեր քարտագրելիս:

դաշտ **BKS** **SER** **MP** **CF** **ART**

008 Յիմնական տեղեկություն. Ֆիքսված երկարությամբ տվյալների տարրեր

FIXED-LENGTH DATA ELEMENTS--GENERAL INFORMATION

Ֆիքսված երկարությամբ վերահսկիչ դաշտ (Fixed length control field)

Այս դաշտը եւս կողավորված տեղեկություն է գրանցվող միավորի առանձնահատուկ կողմերի վերաբերյալ, ստեղծվում է ինքնաշխատ կերպով, եւ կարող է օգտակար լինել տվյալների որոնման կամ կառավարման դեպքում: Այստեղ արդեն մի քիչ գործ ունենք անելու: Նույն խմբագրման նշանը (Tag editor) կտեսնենք դաշտի աջ կողմում: [Նկ. 16](#)

Սեղմելիս՝ կբացվի հետեւյալ պատուհանը. [Նկ. 18](#)

Field Number	Description	Value
Type of Material		BKS - Books
00-05	Date entered on file	#
06	Type of date/Publication status	b - No dates given; B.C. date involve
07-10	Date 1	
11-14	Date 2	
15-17	Two- or three-character alphabetic code that indicates the place of publication, production, or execution. MARC Code List for Countries	
18	Illustrations - code 1	# - No illustrations
19	Illustrations - code 2	# - No illustrations
20	Illustrations - code 3	# - No illustrations
21	Illustrations - code 4	# - No illustrations
22	Target audience	# - Unknown or not specified
23	Form of item	# - None of the following
24	Nature of contents - code 1	# - No specified nature of contents
25	Nature of contents - code 2	# - No specified nature of contents
26	Nature of contents - code 3	# - No specified nature of contents
27	Nature of contents - code 4	# - No specified nature of contents
28	Government publication	# - Not a government publication
29	Conference publication	0 - Not a conference publication

Այստեղ լրացնենք առաջին անհրաժեշտության մի քանի տվյալներ:

Օրինակներ`

Type of Material / Քարտագրվող նյութի տեսակը (ինքնաշխատ կերպով դրված է BKS-Books, գրքեր): Պետք է փոխենք ըստ քարտագրվող միավորի տեսակի կամ թողնենք նույնը, եթե գիրք ենք գրանցում: Ամսագրի դեպքում ընտրենք CR-Continuing resources, համակարգչային նյութերի դեպքում CF-Computer files-ը, քարտեզների դեպքում MP-Maps:

06 Type of date / Publication status/ Տարեթվի տեսակը (ցանկից ընտրում ենք **s** - Single known date/probable date / Միակ հայտնի տարեթիվ/հավանական տարեթիվ տարբերակը:

07-10 Date 1 / Հրատարակման տարեթիվը

11-14 Date 2 / Տարեթիվը լրացնում ենք, եթե մուտք ենք անում պարբերական կամ մատենաշար, նշելով հրատարակման ավարտի մեզ հայտնի տարեթիվը, իսկ եթե այն դեռ չարունակվում է լույս տեսնել, նշում ենք 9999:

15-17 Two- or three-character alphabetic code... / Հրատարակող երկրի կոդը

Հայաստանի Հանրապետության կոդը ai է, խորհրդային Հայաստանի դեպքում-air: Երկրների կոդերը կգտնենք այս հոլմով.

http://www.loc.gov/marc/countries/countries_code.html:

35-37 Language code / Գրանցվող միավորի լեզվի կոդը: Եթե գիրքը հայերենով է՝ ընտրում ենք arm, անգլերեն՝ eng, մյուս լեզուների կոդերը կարող ենք գտնել հղումով. [MARC Code List for Languages](#): Գրառում ենք փոքրատառերով:

Ավարտեցի՞նք. սեղմենք **Save**-ը:

Օրինակներ`

bb s2018 ai (2018-ին լույս տեսած գիրք է)

bb s20189999 ai (2018-ից լույս տեսնող ամսագիր է)

1s45 air (1945 թվականին Խորհրդային Հայաստանում լույս տեսած գիրք է)

Այս փոփոխությունները ճիշտ կաշխատեն, եթե քարտագրման մատենագիտական կմախքը ճիշտ է ընտրված: Նորից հիշենք կմախքները, որոնցից պետք է ընտրեինք նոր գրառում սկսելուց առաջ:

Books, Booklets, Workbooks (libraries.am)

Serials (libraries.am)

Maps (libraries.am)

CD-ROMs, DVD-ROMs, General Online Resources (libraries.am)

Art materials (libraries.am)

Անցնենք առաջ: Հաջորդիվ դաշտերը լրացնելու ենք հեշտությամբ:

01X-09X դաշտերը պարունակում են կապեր ստեղծող ստանդարտ համարներ, դասակարգման ինդեքսներ, գտնվելու վայրի կոդեր, եզակի միջազգային նույնականացման փաստաթղթերի համարներ գրանցելու դաշտեր, ինչպես նաև մատենագիտական գրառման հետ կապված այլ տվյալներ՝(020 -ISBN, 022 -ISSN, 024 -ISMN, 040–գրառումը կատարած գրադարանի կոդ, 041-գրառման լեզու եւ այլն):

դաշտ

BKS

020 Գրքի միջազգային չափօրինակային համար, ISBN INTERNATIONAL STANDARD BOOK NUMBER, ISBN

ISBN միջազգային ծրագրին մասնակցող յուրաքանչյուր երկիր գրքի գրանցման գործակալության միջոցով գրքերին տալիս է եզակի չափօրինակային համարներ՝ ISBN-ներ:

Այս դաշտը նախատեսված է գրքի ISBN-ը լրացնելու համար: Դաշտը կարելի է կրկնել, եթե գիրքն ունի մեկից ավելի ճշգրիտ ISBN:

Դաշտի 2 ցուցիչներն էլ սահմանված չեն:

Ուղեցույցում բերված օրինակներում չսահմանված դաշտերը նշվում են բացատի (#) նշանով: Սակայն քարտագրելիս չսահմանված ցուցիչների պատուհանները պարզապես դատարկ կթողնենք:

= դատարկ պատուհան, չշփոթենք 0-ի հետ:

Ենթադաշտերից ներառված են \$a-ն եւ \$c-ն:

\$a ISBN (International Standard Serial Number)

Օրինակներ՝

020 ## \$a978-9939-68-751-3

020 ## \$a9993083607 (կարելի է լրացնել նաեւ առանց գծիկների)

020 ## \$a 9993077364 (վերահրատ.)

\$c Հասանելիության պայմաններ (Terms of availability): Հայաստանի գրադարանների պարագայում կա ներքին պայմանավորվածություն, որ այս ենթադաշտը բաց թողնվի:

դաշտ **SER**

022 Միջազգային չափօրինակային հերթական համար, ISSN

INTERNATIONAL STANDARD SERIAL NUMBER, ISSN

Դաշտը նախատեսված է պարբերականներ (ամսագիր, շաբաթաթերթ, հանդես) քարտագրելու համար: Եթե քարտագրում ենք գիրք, ապա բաց ենք թողնում այս դաշտը:

Պարբերականներն ունեն գրանցման գործակալության կողմից տրված միջազգային չափօրինակային հերթական համար՝ ISSN: Դաշտը կարելի է կրկնել, եթե պարբերականն ունի մեկից ավելի ճշգրիտ ISSN:

Դաշտն ունի 2 ցուցիչ:

Առաջին ցուցիչ՝ միջազգային նշանակության մակարդակ, նշվում է **#, 0** եւ **1** կոդերով

- պարբերականի միջազգային նշանակության մակարդակը հայտնի չէ

0 - պարբերականն ունի միջազգային նշանակություն

1 - պարբերականը չունի միջազգային նշանակություն

Երկրորդ ցուցիչ՝ սահմանված չէ եւ նշվում է բացառի (**#**) նշանով: Պատուհանը թողնում ենք դատարկ:

Ենթադաշտերից ներառված են՝ **\$a, \$y, \$z**

Օրինակներ՝

022 ## \$a8755-1231 (միջազգային նշանակության մակարդակը հայտնի չէ)

022 0# \$a8755-1231 (միջազգային նշանակության ունի)

\$y-սխալ ISSN (կարելի է չլրացնել, եթե առկա չէ)

\$z-փոփոխված ISSN (կարելի է չլրացնել, եթե առկա չէ)

դաշտ

BKS

SER

MP

CF

040 Քարտագրող կազմակերպություն

CATALOGUING SOURCE

Դաշտը ներկայացնում է գրառումը կատարող մատենագրող կազմակերպությունը (դրա կոդը), որը պատասխանատու է բովանդակության համար: Կոդը տրամադրում է Կոնգրեսի գրադարանը: Անկախ գրադարանների ցանցի գրադարանները չունեն Կոնգրեսի գրադարանի կոդից տրամադրված կոդեր: Հետեւաբար չենք լրացնում այս դաշտը: Ներմուծվող գրքի պարագայում այստեղ ինքնաշխատ կերպով կավելանա այն գրադարանի կոդը, որտեղից ներմուծում ենք:

Ունի 2 ցուցիչ, երկուսն էլ սահմանված չեն (անորոշ են) եւ նշվում են բացատի (#) նշանով:

Ենթադաշտերից ներառված են՝

\$a Գրանցված մատենագրող կազմակերպության կոդը (Original cataloging agency)

\$d Գրառման մեջ փոփոխություն կատարող եւ դրա համար պատասխանատու կազմակերպություն (Modifying agency)

Օրինակ՝

040 ## \$aDLC

\$dCtY

(Քարտագրել է Կոնգրեսի գրադարանը, փոփոխել է Եյլի համալսարանը (Yale University):

դաշտ

BKS

SER

MP

CF

ART

041 Լեզվի կոդ

LANGUAGE CODE

Այս դաշտն արտացոլում է գրանցվող միավորում առկա բոլոր լեզուների համընդհանուր պատկերը, եւ տեղեկություն է հաղորդում թարգմանության, բնօրի-նակի կամ ուղեկցող լեզվի, այլ մանրամասների վերաբերյալ: Ենթադաշտերում լեզվի կոդերը նշվում են անգլերեն փոքրատառերով: Լեզվի կոդերի ամբողջական ցանկը կարելի է գտնել այստեղ՝ [MARC Code List for Languages](#):

Դաշտն ունի երկու ցուցիչ:

Առաջին ցուցիչ՝ թարգմանության ցուցում, նշվում է **0** կամ **1** կոդերով:

0 Գրանցվող գիրքը/պարբերականը թարգմանությունն չէ եւ չի ներառում թարգմանություններ:

1 Գրանցվող գիրքը/պարբերականը թարգմանությունն է կամ ներառում է թարգմանություններ:

Երկրորդ ցուցիչ՝ լեզվի կոդի աղբյուր:

Հայաստանի գրադարանների պարագայում երկրորդ ցուցիչը չեն նշում: Պատուհանը թողնում ենք դատարկ:

Ենթադաշտերից ներառված են՝

\$a-գրանցվող միավորի լեզուն

Օրինակ՝

041 0# \$aeng

\$afre

\$ager (տեքստը զուգահեռաբար անգլերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն է, ինչպես ասենք բառարանի դեպքում):

Եթե տեքստում կան գերակայող լեզուներ, դրանք նշվում են ըստ հերթականության:

Օրինակ`

041 0# \$arus

\$aeng (տեքստը ռուսերեն (գերակայող լեզու) եւ անգլերեն է):

Եթե լեզուները ներկայացված են հավասարապես, դրանք նշվում են ըստ անգլերեն այբբենական հերթականության:

Օրինակներ`

041 0# \$acze

\$aeng

\$ager (տեքստը լեզուն է չեխերենով, անգլերենով եւ գերմաներենով)

041 0# \$amul

\$arus (բազմալեզու (mul-multilingual) տեքստ` առանց գերակայող լեզվի: Վերնագիրը ռուսերեն է)

\$b – Ամփոփագրի, սեղմագրի, անտոացիայի կամ ենթագրերի լեզուն: Լեզուները նշվում են անգլերեն փոքրատառերով: Գրքի/բուկլետի/ամսագրի դեպքում լրացնենք այս ենթադաշտը անկախ նրանից՝ \$a ենթադաշտում մեր նշած լեզուն ևսյնն է, թե՞ տարբեր:

Օրինակ`

041 0# \$aeng

\$bfre

\$bger

\$bspa (անգլերեն տեքստ` ֆրանսերեն, գերմաներեն եւ իսպաներեն սեղմագրերով)

\$h- Բնօրինակի լեզվի կոդ

Օրինակներ`

04 11 # \$aarm

\$hrus

\$heng (ռուսերեն միջևորդ լեզվից արված է հայերեն թարգմանություն, սակայն բնօրինակի լեզուն անգլերենն է: Արված է միջևորդ թարգմանություն)

041 1# \$aeng

\$hmul (հինդու տարբեր լեզուներից անգլերեն թարգմանված բանաստեղծությունների անթուրգիա է)

041 1# \$aarm

\$arus

\$harm (հրատարակությունը պարունակում է բնօրինակ տեքստ` հայերենը եւ դրա թարգմանությունը` ռուսերենը)

դաշտ

BKS

MP

CF

ART

100 Անձնանուն (հեղինակ). հիմնական գրառում

MAIN ENTRY-PERSONAL NAME

Մատենագրության մեջ այս դաշտը հանդիսանում է հիմնական գրառում: Անձնանունների ճիշտ գրառմամբ կօգնենք ընթերցողին արագ ու հեշտ գտնելու գիրքը: Այս դաշտը լրացնելիս գուցե կարիք կլինի, որ թռնենք դեպի 245 եւ 700 դաշտերը եւ վերադառնանք:

- Եթե գիրքն ունի մինչեւ 3 հեղինակ, ապա գրառենք առաջին հեղինակի անուն-ազգանունը 100 դաշտում, համահեղինակներին` 700 դաշտում: Իսկ 245 դաշտի \$c ենթադաշտում լրացնենք հեղինակների անուն-ազգանունը ինչպես նշված է գրքի տիտղոսաթերթի վրա:

- Եթե գիրքն ունի 3-ից ավելի հեղինակներ, ապա 100 դաշտը բաց ենք թողնում: Լրացնենք բոլոր հեղինակներին միայն 700 դաշտում: Իսկ վերնագրի 245 դաշտի \$c ենթադաշտում գրենք առաջին երեք համահեղինակներին:

Դաշտն ունի երկու ցուցիչ:

Առաջին ցուցիչ՝ անձնական գրառման տարրի տեսակն է, նշվում է 0, 1 եւ 3 կոդերով:

0 - անուն

1 - ազգանուն

3 - տոհմ, ցեղ, ազգ եւ այլն

Ժամանակակից հեղինակներն ունեն գրառման պարտադիր ձեւ՝ ազգանուն-անուն հերթականությամբ: Հին հեղինակները, նաեւ որոշ ազգերի հեղինակներ (օր.՝ չինացի) լրացվում են ուղիղ ձեւով:

Երկրորդ ցուցիչ՝ սահմանված չէ եւ օրինակներում նշվում է բացատի (#) նշանով: Պատուհանը թողնում ենք դատարկ:

Ենթադաշտերից ներառված են՝

\$a - անուն-ազգանուն

Օրինակներ անունով՝

100 0# \$aԱրիստոտել

100 0# \$aԳրիգոր Նարեկացի

Օրինակներ ազգանունով՝

100 1# \$aAdams, Henry

100 1# \$aՀովհաննիսյան, Աշոտ

\$b - համարակալում

\$c - անվանն առնչվող կոչում, պաշտոն, այլ հուշող բառեր

\$d - անվանն առնչվող տարեթվեր

Օրինակներ`

100 0# \$aԱրշակ

\$bԲ,

\$cարքա հայոց,

\$dմ.թ.ա. 320?-368

100 1# \$aԴյուլմա, Ալեքսանդր

\$c (հայր)

\$d1802-1870

100 0# \$aThomas,

\$cAquinas, Saint,

\$d1225?-1274

\$e - տվյալ ստեղծագործության մեջ անձի դերը

Օրինակ`

100 1# \$aMorgan, John Pierpont

\$d1837-1913

\$ecollector.

\$q - անվան ամբողջական ձեւը

Օրինակ`

100 1# \$aGresham, G. A.


\$q(Geoffrey Austin)




100 1# \$aSmith, Elizabeth

\$q(Ann Elizabeth)

Հիմնական գրառում հանդիսացող բոլոր դաշտերի ենթադաշտերի ամենավերում կոտեսեք 9 (RLIN) ենթադաշտը, որ կողպված է եւ լրացնել հնարավոր չէ: Սա ինքնաշխատ գեներացվող ենթադաշտ է, որը ներքին կապեր է ստեղծում libraries.am-ում ընդգրկված բոլոր գրադարանների քարտարանների միջեւ: Ենթադրենք՝ այս պահին գրանցում ենք Թումանյանի Անուշ պոեմը, իսկ քարտարանում մեկ այլ գրադարան արդեն գրանցել է Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուներից մեկը: Համակարգն ինքնաշխատ կերպով ստեղծում է հեղինակային կապ այս գրառումների միջեւ: «Թումանյան» փնտրելիս կարտաբերվեն Թումանյանի բոլոր գործերը:


Հաշվի առնենք, որ Z39.50/SRU search-ով Կոնգրեսի կամ Հայաստանի ազգային գրադարաններից գրառումը ներմուծելիս, երբեմն, բայց ոչ միշտ, ծրագիրն ինքնաշխատ կերպով բերում է նշված գրադարաններում ստեղծած իր հին կապերը եւ քարտարանում նոր կապ չի ստեղծում: Նման դեպքում, եթե ցանկանում ենք, որ նոր կապ ստեղծվի, կարող ենք ջնջել դաշտը (Delete This Tag): Ենթադաշտերը կմաքրվեն եւ կարող ենք նորից լրացնել: **Նկ. 19**

? - MAIN ENTRY--PERSONAL AUTHO 

4	Relator code	<input type="text"/>	 
9	9 (RLIN)	<input type="text"/>	
a	Personal name	<input type="text"/>	
d	Dates associated with	<input type="text"/>	

Հիմնական գրառում հանդիսացող դաշտերն ունեն նաեւ որոնման ու տվյալների ինքնաշխատ լրացման հնարավորություն: Լրացնելով \$a ենթադաշտը (պարտադիր չէ ամբողջությամբ)՝ սեղմենք խմբագրման նշանը. **Նկ. 20**

100 ? - MAIN ENTRY--PERSONAL NAME 

9	9 (RLIN)	<input type="text"/>	
a	Personal name	<input type="text"/>	
b	Numberation	<input type="text"/>	 <input type="button" value="Tag editor"/>
c	Titles and words associated with a name	<input type="text"/>	 
d	Dates associated with a name	<input type="text"/>	
e	Relator term	<input type="text"/>	 

«Search main heading (\$a only)» դիրքում կարող ենք փնտրել մեզ հետաքրքրող հեղինակին: Գտնելու պարագայում սեղմենք «Choose»-ը եւ պահպանենք:

Տվյալներն ինքնաշխատ կներմուծվեն գրառման համապատասխան դաշտերն ու ենթադաշտերը: [Նկ. 21](#)

Authority search results

Clear field
+ Create new authority

Search options

Authority type: PERSO_NAME

Search main heading (\$a only): contains ▼ Մելքումյան, Սերգեյ Ավանեսի,

Search main heading: contains ▼ 1931-

Search all headings: contains ▼

Search entire record: contains ▼

Sort by: Heading A-7 ▼

Search Cancel

Results 1 to 1 of 1

Summary	Used	Get it!	Other action
Personal Names: Մելքումյան, Սերգեյ Ավանեսի, 1931-	20 times	choose	Edit authority

դաշտ

BKS ART

110 Կորպորատիվ անվանում. հիմնական գրառում

MAIN ENTRY-CORPORATE NAME

Մատենագրության մեջ հիմնական գրառումներից է: Դաշտը լրացնում ենք, եթե քարտագրվող միավորը ներկայացնում է խմբային աշխատանք, այսինքն՝ գրքի կամ ժողովածուի հեղինակը իրավաբանական գրանցում ունեցող հաստատություն է՝ հիմնադրամ, ինստիտուտ, հետազոտական կենտրոն եւ այլն:

Դաշտն ունի երկու ցուցիչ:

Առաջին ցուցիչ` կորպորատիվ անվան գրառման տարբերակներ, նշվում է 0, 1 եւ 2 կոդերով:

0 - Շրջված անուն (եթե իրավաբանական անունը սկսվում է ազգանունից)

Օրինակներ`

110 0# \$aNewman (Jean and Dorothy) Industrial Relations Library

110 0# \$aՄարքս, Ա. Ֆ., հրատարակչություն (Պետերբուրգ)

1- Իրավաբանական անուն

Օրինակներ`

110 1# \$aԵրուսաղեմ (Հայոց պատրիարքարան)

110 1# \$aՀայաստանի Հանրապետություն

\$bՆախագահ (1945: Լեւոն Տեր-Պետրոսյան)

110 1# \$aԵրեւան

\$bԳեոդեզիայի եւ քարտեզագրության վարչություն

2 - Անվանման ուղիղ ձեւը (կարող է լինել նաեւ հապավում)

Օրինակներ`

110 2# \$aHarvard University

110 2# \$aԻրազեկ քաղաքացիների միավորում

Դաշտի **երկրորդ ցուցիչը** սահմանված չէ եւ օրինակներում նշվում է բացառի (#) նշանով: Հիշում եք, չէ՞, եթե ցուցիչը սահմանված չէ, պատուհանը թողնում ենք դատարկ:

Ենթադաշտերից ներառված են՝

\$a - կազմակերպության կորպորատիվ կամ իրավաբանական անվանումը
(Corporate name or jurisdiction name as entry element)

Օրինակներ՝

110 2# \$aԵրեւանի Պետական Համալսարան

\$bՖիզիկայի ֆակուլտետ

110 1# \$aUnited States.

\$bCongress.

\$bJoint Committee on the Library.

110 1# \$aThe World Press Photo Foundation

\$b - կառուցվածքային ստորաբաժանումը (Subordinate unit)

Օրինակներ՝

110 2# \$aՍմիթսոնյան ինստիտուտ

\$bՀայաստանի մասնաճյուղ

110 1# \$aՀայաստանի Հանրապետություն

\$bԳիտությունների ազգային ակադեմիա

\$bԱրվեստի ինստիտուտ

\$c - Միջոցառման վայրը (Location of meeting)

\$d - Միջոցառման (կամ պայմանագրի) թվական (Date of meeting or treaty signing)

Օրինակ`

110 2# \$aԵրեւանի Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան
 \$bՄատենադարանի երիտասարդ գիտաշխատողների միավորում
 \$cՀայաստան

\$cՄատենադարան

\$d2019

(Ավելի մանրամասնելու համար կարող ենք ավելացնել ենթա-
 դաշտերը)

\$e - Կոլեկտիվի/կազմակերպության դերը գրառման առնչությամբ
 (Relator term)

Օրինակ`

110 2# \$aEastman Kodak Company,

\$edefendant-appellant

դաշտ BKS ART

111 Միջոցառման անվանում. հիմնական գրառում

MAIN ENTRY-MEETING NAME

Մատենագրության մեջ հիմնական գրառումներից է: Դաշտում գրառենք այն կյութերը, որոնք հանդիսանում են կոնֆերանսի, միջոցառման, հանրագումարի, ժամանակավոր կոլեկտիվի կամ կազմա-կերպության աշխատանք/արդյունք/հրատարակություն:

Դաշտն ունի երկու ցուցիչ:

Առաջին ցուցիչ՝ կոլեկտիվի/միջոցառման անվանման գրառման տարբերակներ, նշվում է 0 եւ 2 կոդերով:

0 - Շրջված անուն (եթե միջոցառման պաշտոնական անվանումը սկսվում է ազգանունից, օրինակ՝ ցուցահանդեսների դեպքում)

Օրինակ՝

111 0# \$աթումանյան-150

1 - Միջոցառման իրավաբանական անվանումը

Օրինակ՝

111 1# \$աՅամահայկական խաղեր

2 - Միջոցառման ուղիղ անվանումը

Օրինակներ՝

111 1# \$աՄնջախաղի միջազգային կոնֆերանս

\$d(2016 :

\$cԾաղկածոր)

111 1# \$a«Վերանայելով սովետական մոդեռնիզմը. սոցիալիստական մոդեռնիզմի ճարտարապետական ժառանգության անցյալը, ներկան եւ ապագան» գիտաժողով

\$d(2017:

\$cԵրեւան)

Դաշտի **երկրորդ ցուցիչը** սահմանված չէ եւ օրինակներում նշված է բացառիկ (#) նշանով:

Ենթադաշտերից ներառված են՝

\$a - Միջոցառման անվանումը կամ իրավաբանական անվանումը (Meeting name or jurisdiction name as entry element)

\$c - Միջոցառման վայրը (Location of meeting)

\$d - Միջոցառման (կամ համաձայնագրի ստորագրման) ամսաթիվը (Date of meeting or treaty signing (R))

\$e - Կառուցվածքային ստորաբաժանումը (Subordinate unit)

\$n - Միջոցառման/հանդիպման թիվը (Number of part/section/meeting)

Օրինակներ՝

111 2# \$aՀանրային ոլորտ. վիճարկման եւ վերըմբռնման միջեւ

\$d(25-27 հոկտեմբերի 2005 թ:

\$cԵրեւան)

111 2# \$aWhite House Conference on Library and Information Services

\$d(1979 :

\$cWashington, D.C.).

\$eOhio Conference Delegation.

Այստեղ դաշտերի հերթականությունը հետեւյալն է՝ **\$a, \$n, \$d, \$c, \$e**:

Կետադրություն. **\$d**-ն ու **\$c**-ն գրում ենք **()** փակագծերի մեջ, իսկ **\$d**-ից հետո դնում ենք **(:)** նշանը:

դաշտ

SER

210 Վերնագրի կրճատ ձեւ

ABBREVIATED TITLE

Ինչպես ISSN-ները, այնպես էլ վերնագրերի կրճատ ձեւը (գլխավոր վերնագրի հիման վրա, 222 դաշտ) տրամադրում է գրական գործակալությունը: Եթե չունենք այդպիսին, դաշտը բաց ենք թողնում: Եթե ամսագիրն ունի հայտնի կրճատ անվանում, կարող ենք ավելացնել այդ դաշտում: Ներմուծվող ամսագրի դեպքում դաշտն ինքնաշխատ կերպով կլրացվի:

Ունի երկու ցուցիչ

Առաջին ցուցիչը լրացուցիչ գրառման կարգավորիչն է, նշվում է 0 եւ 1 կողերով:

0 - Վերնագրի հավելյալ գրառում չի արվում

1 - Վերնագրի հավելյալ գրառում արվում է

Երկրորդ ցուցիչը՝ վերնագրի տեսակ, նշվում է # եւ 0 կողերով:

- Վերնագրի կրճատ ձեւ

0 - Հիմնական վերնագրի կրճատ ձեւից տարբեր վերնագիր

Ենթադաշտերից ներառված է՝

\$a Վերնագրի կրճատ ձեւ (Abbreviated title)

Օրինակներ՝

210 0# \$aAnnu. wildl. fish. rep.

222 #0 \$aAnnual wildlife and fisheries report

245 00 \$aAnnual wildlife and fisheries report /\$cUnited States Department of Agriculture, Forest Service, Wildlife and Fisheries.

դաշտ

SER

222 Բացառիկ վերնագիր

KEY TITLE

Այս դաշտում լրացնում ենք պարբերականի մաս կազմող եւ նույն ISSN-ով պարբերաբար թողարկվող պարբերականների բացառիկ վերնագիրը, որը նույնպես տրամադրում է ISSN գրական գործակալությունը: Եթե չունենք այդպիսին, բաց ենք թողնում դաշտը:

Ունի երկու ցուցիչ:

Առաջին ցուցիչը սահմանված չէ եւ նշվում է # (բացատ) նշանով:

Դաշտի **երկրորդ ցուցիչն** օգնում է գրքի որոնմանը եւ նշվում է 0-ից մինչեւ 9 թվերով: Համապատասխանաբար, վերնագրի սկզբից այդքան նիշ անտեսվում է տեսակավորման (որոնման) ընթացքում:

Ենթադաշտերից ներառված է՝

\$a - Գլխավոր վերնագիր (Key title)

Օրինակներ՝

210 10 \$aРЖ

222 #0 \$aРеферативный журнал. 24, Радиотехника

245 10 \$aРеферативный журнал.

222 #0 \$a101 gardening and outdoor ideas

245 00 \$aWoman's day 101 gardening and outdoor ideas.

դաշտ

BKS

240 Ընդհանուր վերնագիր

UNIFORM TITLE

Այս դաշտը լրացնում ենք, եթե մեր գիրքը մաս է կազմում մի ընդհանուր վերնագրի եւ գրառման ենթակա է թե՛ անձնանվան (100), թե՛ կորպորատիվ կազմակերպության (110) կամ միջոցառման (111) դաշտերում: Արդյունքում անհրաժեշտ է դառնում ընտրել ընդհանուր վերնագիր, որը կներկայացնի գիրքը: Կիրառվում է անանուն դասական ստեղծագործություններ (Սասնա ծռեր, Ալի Բաբա եւ քառասուն ավազակներ), սուրբ գրություններ, երկերի ժողովածու, բանաստեղծություններ, ընտրանի, պոեմներ եւ այլն գրառելու համար: Կիրառվում է նաեւ այն դեպքերում, երբ վերնագիրն անհրաժեշտ է լրացնել կամ կրճատել: Անմիջական կապ ունի 245 եւ 246 դաշտերի հետ եւ երբեմն կարող է չտարբերվել 245 դաշտի \$a ենթադաշտից:

Օրինակ՝

240 10 \$aՊոեմներ

\$kԸնտրանի

245 10 \$aՊոեմներ

\$cԵ. Չարեև

Դաշտն ունի երկու ցուցիչ:

Առաջին ցուցիչ՝ գրառման ընդհանուր վերնագիրը հիմնական վերնագիրն է, թե՞ ոչ, նշվում է 0 եւ 1 կոդերով:

0 - Վերնագիրը չի օգտագործվում որպես վերնագիր (ընդհանուր վերնագիրը գրառման գլխավոր վերնագիրը չէ):

1 - Ընդհանուր վերնագիրը գրառման գլխավոր վերնագիրն է:

Դաշտի **երկրորդ ցուցիչ** օգնում է գրքի որոնմանը եւ նշվում է 0-ից մինչեւ 9 թվերով: Համապատասխանաբար, վերնագրի սկզբից այդքան նիշ անտեսվում է տեսակավորման (որոնման) ընթացքում:

Օրինակ, եթե գրքի վերնագրում անգլերենում կա «the» (The giving tree), ֆրանսերենում՝ «la» (La Chambre claire), ապա երկրորդ ցուցիչի պատուհանիկում կարող ենք նշել 4 (բացատ+the), 3 (բացատ+la), ինչը կօգնի որոնման ժամանակ բաց թողնել այդ տառերը եւ որոնել ամբողջական բառերով (giving tree, Chabre claire):

Եթե դրանք բացակայում են վերնագրում, պարզապես բաց ենք թողնում ցուցիչի պատուհանը կամ՝ գրում 0:

Ենթադաշտերից ներառված են՝

\$a - Ընդհանուր վերնագիր (Uniform title)

\$h - Միջոցը (օր՝ տեքստ, տեսանյութ, ձայնագրություն) (Medium)

(Հայաստանի գրադարանները գիրք եւ ամսագիր մուտք անելուց հիմնականում չեն լրացնում \$h ենթադաշտը: Լրացնելիս վերցնենք միջոցը [] փակագծերի մեջ:)

\$k – Ձեւի ենթավերնագիրը (Form subheading) Միավորի տեսակը, ձեւը, ժանրը

\$l - Գրանցվող միավորի լեզուն (Language of work)

\$s - Տարբերակը (Version)

Օրինակներ՝

100 1# \$aГорький, Максим.

\$d1868-1936

240 00 \$aАвтобиографические повести

245 10 \$aДетство

\$cМ.Горький

100 0# \$aHomer

240 10 \$aIliad.

\$kSelections.

\$lEnglish

245 03 \$aAn English translation of the first eight books of the Iliad of Homer,

\$cby James Gilchrist, A.M.

245 02 \$aA daughter of the gods

\$bBallads from the first, second and third books of the Iliad,

\$cby Joseph Cross.

դաշտ

BKS

SER

MP

CF

ART

245 Վերնագրային տվյալներ

TITLE STATEMENT

Հիմնական գրառում է եւ պարտադիր լրացվող դաշտ, որտեղ լրացնում ենք տիտղոսաթերթի վրա նշված ամբողջական հստակ վերնագիրը:

Դաշտն ունի երկու ցուցիչ:

Առաջին ցուցիչ՝ վերնագրի լրացուցիչ որոնման հատկանիշն է, նշվում է 0 եւ 1 կոդերով:

0 - վերնագրի համար լրացուցիչ գրառում չի ստեղծվում:

1 - վերնագրի համար ստեղծվում է լրացուցիչ գրառում:

Դաշտի **երկրորդ ցուցիչը** նույնն է, ինչ 240 դաշտում: Օգնում է գրքի որոնմանը եւ նշվում է 0-ից մինչեւ 9 թվերով: Համապատասխանաբար, վերնագրի սկզբից

այդքան նիշ անտեսվում է տեսակավորման (որոնման) ընթացքում: Եթե նման տառեր վերնագրում չկան, պարզապես բաց ենք թողնում ցուցիչի պատուհանը կամ՝ գրում **0**:

Ենթադաշտերից ներառված են՝

\$a - Վերնագիր (Title)

\$b - Վերնագրի մնացյալ մաս (Reminder of title) (հիմնական վերնագրի մնացյալ մասն է, ենթավերնագիրը, վերջակետից հետո եկող մասը)

\$c - Պատասխանատու անձ / կազմակերպություն (Statement of responsibility, etc.)

Այստեղ լրացնում ենք հեղինակ, խմբագիր, նկարագարող, առաջաբանի կամ վերջաբանի հեղինակ, նաեւ կոլեկտիվ հեղինակ:

- Եթե գիրքն ունի մինչեւ 3 հեղինակ, ապա լրացնում ենք առաջին հեղինակին 100 դաշտում, համահեղինակներին՝ 700 (Անձնանուն. լրացուցիչ գրառում) դաշտում: Իսկ 245 (Վերնագրային տվյալներ) դաշտի \$c ենթադաշտում լրացնում ենք հեղինակներին, ինչպես նշված է գրքի տիտղոսաթերթի վրա:
- Եթե գիրքն ունի 3-ից ավելի հեղինակներ, ապա լրացնում ենք միայն 700 դաշտում: Իսկ վերնագրի 245 դաշտի \$c ենթադաշտում գրում ենք առաջին երեք համահեղինակներին:

\$h- Միջոցը (Medium) (օր՝ տեքստ, տեսանյութ, ձայնագրություն)

Օրինակներ՝

245 00 \$aXX դարի արտասահմանյան արձակ

\$h[տեքստ] /

\$cԵՊՀ ; [Կազմ. եւ կենսագր. գրեց՝ Ա.Ո. Խաչատրյան; Առաջաբ. եւ ծանոթագր.՝ Ս.Ե.Փանոսյան]

245 10 \$aWomen, art, and power

\$h[text] :

\$band other essays /

\$cLinda Nochlin

Այստեղ դաշտերի հերթականությունն ու կետադրությունը շատ կարևոր է:

Հերթականությունը հետեւյալն է՝ **\$a**, **\$h** (Հայաստանի գրադարանները տեքստի դեպքում հիմնականում չեն լրացնում), **\$b**, **\$c**

Եթե նշված բոլոր ենթադաշտերը լրացնում ենք, ապա **\$a**-ից հետո գրում ենք **\$h**-ը **[]** նշանով, վերջում դնում ենք **(:)** նշանը, իսկ **\$b**-ից հետո դնում ենք ենթադաշտ **(/)** նշանը:

Եթե **\$h**-ը չենք լրացնում, ապա **\$a** -ից հետո լրացնում ենք **\$b**-ն եւ **\$c** -ն, **\$a**-ից հետո դնում ենք **(:)**, իսկ **\$b**-ից հետո՝ **(/)**:

Եթե **\$b**-ն չկա, եւ լրացնում եք **\$a**-ն եւ **\$c** -ն, **\$a**-ից հետո դնում ենք **(/)** նշանը:

դաշտ

BKS

SER

MP

ART

246 Վերնագրի այլ տարբերակ

VARYING FORM OF TITLE

Դաշտը լրացվում է այն դեպքում, երբ գրքի շապիկին, կողամասին կամ այլ մասում գրված են տիտղոսաթերթի վերնագրից (245 դաշտ) տարբերվող այլ վերնագրեր: Այստեղ լրացվում է գրքի այլընտրանքային վերնագիրը, գրքի՝ մեզ հայտնի տարբեր թարգմանությունները եւ այլն: Անհրաժեշտության դեպքում դաշտը կարող ենք կրկնել:

Ունի երկու ցուցիչ:

